Ռաֆֆի

Հարեմ

1 - Ե, Զ

Արևը սկսել էր խոնարհվել դեպի յուր գիշերային մուտքը: Ամրոցի բարձր պատերի ստվերը հետզհետե լայնանում էր բակերի վրա: Իսկ երեկոյան մեղմիկ զեփյուռը ոգի էր ներշնչում ցերեկվա տոթից թուլացած տերևներին:

Հարեմական ծառաների խումբը՝ սև ստրուկներ, ալևոր ծերունիք, փոքրիկ պատանյակներ բոլորը հարեմների անվտանգ մարդիկ, որը բակն էր ավելում, որն ավազաններից ջուր էր կրում և որը ցնցուղներով սրսկում էր սալահատակների և ծաղիկների վրա: Նրանց մոտ կանգնած էր մի բարձրահասակ մարդ՝ լղարիկ կազմվածքով, բոլորովին լերկ ու թառամած երեսով և սպառնալից աչքերով: Նա հրամաններ էր տալիս աշխատողների խմբին: Նրա պատշաճավոր հագուստը, գոտկումը խրած ղաջարյան դաշնակն որոշում էր նրան մյուս ծառաներից . դա ներքինապետ Հեյդարն էր:

Մարջանը, բոլորովին կազմած գլխումը յուր տիրուհու նպատակին ծառայող գաղափարի ծրագիրը, դուրս եկավ հովանոցից, երբ նրան հանդիպեց Հեյդարը:

Ի՞նչ է պատահել քո տիկնոջ հետ, քանի օր է նա չէ երևում, հարցրուց ներքինապետը:

Ա՛խ, մի՛ հարցներ, Հեյդար... պատասխանեց խափշիկը տալով յուր ձայնին խիստ ցավալի արտասանություն: Մարգարեների մեծը թող օգնե նրան, իմ տիրուհին ողորմելի դրության մեջ է...

Ի՞նչ է, հիվա՞նդ է, հարցրուց ներքինապետը զարհուրելով:

Երանի՛ թե հիվանդ լիներ. . . առաջ տարավ խափշիկը, նա տանջվում է չար ոգիներից:

Չար ոգիների՞ց, կրկնեց Հեյդարն ավելի սարսափելով: Ո՛վ գթած և ողորմած ալլահ...

Այո՛, բարի Հեյդար, ցերեկները հանգստություն չունի և ամբողջ գիշերը նրա աչքերին քունը մոտ չէ գալիս: Դևերը և ջիններն անդադար բզբզում են նրա ականջներին, վախեցնում են և ամենևին չեն հեռանում նրանից:

Նզո՛վք, շեյթանին, բացականչեց ներքինապետը:

Պետք է շուտով կանչել ջինդարին (կախարդ):

Ես էլ այդպես եմ մտածում, Հեյդար: Ես ճանաչում եմ մի պառավ վհուկ, նա կոչվում է «ջինների մայր»: Նա իշխում է դևերի վրա, երկնքից աստղ է վեր բերում, ասում են, և փակյալ գանձերի դուռն է բաց անում: Այս առավոտ ես նրա մոտ էի, խոստացավ գիշերը գալ, երբ ավելի են հավաքվում իմ տիկնոջ շուրջը չար ոգիները:

Ուրեմն կգա՞ նա:

Անպատճառ, այս գիշեր: Բայց գիտե՞ս, ի՛նչ ասաց կախարդը: Նա ասաց, խանումը պետք է միայնակ լինի յուր սենյակումն. ոչ ոք չհամարձակվի ներս մտնել նրա մոտ, որ նրա հմայքները չարգելեն:

Ես կհրամայեմ ամենին, մոտ չգալ այն ժամուն խանումի սենյակին:

Կախարդը կբերե յուր հետ դևերի իշխանին, առաջ տարավ խափշիկը, նա կհալածե ամրոցից բոլոր չար ոգիները. մեծ պատերազմ կլինի ոգիների մեջ և այդ միջոցին խանումի բակումն ոչ մի արարած պիտի չերևա, եթե ոչ կհանդիպի նրանց սրերին: Այդպես ասում էր կախարդը:

Ես կկարգադրեմ բոլորը, որպես պահանջում է կախարդը, պատասխանեց ներքինապետը: Բայց նույն րոպեին նա ամբողջ մարմնով դողում էր երկյուղից:

Միայն դու, Մարջան, այս գիշեր աշխատիր անպատճառ բերել նրան:

Խափշիկը հեռացավ ներքինապետից լի բավականությամբ որպես մի մարդ, որ կիսով չափ հասել էր յուր նպատակին: Նա գտավ յուր տիրուհին նույն դրության մեջ, որպես թողել էր: Զեյնաբ-խանումը, տակավին թիկն տված թավիշյա բարձերին, յուր սրտի ամենաքաղցր վրդովմունքի մեջ էր: Խափշիկի պատմածները հարեմական գաղտնիքների մասին քաջալերում էին նրա սիրտը, և նա հույս ուներ մյուս անգամ տեսնել նրան, և այդ բախտավոր րոպեին սպասում էր նա մեծ անհամբերությամբ: Տեսնելով Մարջանի ուրախ դեմքը, նա հավատացրեց իրան, թե խորամանկ խափշիկն արդեն կազմել էր յուր մեքենան: Եվ այդ կարծիքի մեջ չսխալվեցավ նա, երբ լսեց հետագա խոսքերը.

Իմ տիկնոջ աչքը թո՛ղ լուսավոր լինի, ամեն բան արդեն կարգադրած է:

Ո՞րպես, հարցրուց Զեյնաբ-խանումը ուրախությամբ: Խափշիկը պատմեց այն ամենը, ինչ որ խոսել էր ներքինապետի հետ: Դու կատարյալ սատանա ես, Մարջան, խոսեց Զեյնաբ-խանումը ծիծաղելով. ուրեմն նա կմտնի ինձ մոտ որպես կախա՞րդ:

Այո՛: Բայց լսեցեք, տիրուհի, այդ բոլորը չէ:

Այլևս ի՞նչ ունես ասելու:

Մենք չենք կարող այդ գաղտնիքը ծածուկ պահել Սայիդից, նա պետք է գիտենա բոլորը:

Ի՞նչպես հավատալ նրան:

Ես երաշխավոր եմ լինում իմ գլխով:

Տիկինը մտածության մեջ ընկավ:

Դու երևի ամենը պատմեցի՞ր նրան, հարցրուց խանումը բոպեական խոռվությունից հետո:

Բոլորը: Թո՛ղ իմ տիկինը չվրդովվի, Մարջանը լավ գիտե յուր գործը: Ես խոստացա Սայիդին, թե խանումը կշնորհե քեզ ազատություն, եթե դու լուռ պահես լեզուդ:

Նա ի՞նչ ասավ:

Նա խոստացավ ոչ միայն լուռ մնալ, այլև ամեն բանի մեջ օգնել մեզ: Եվ երդվեցավ սարսափելի երդումներով և իմ սիրով:

Քո սիրո՞վ, կրկնեց տիկինը մի փոքր սիրտ առնելով:

Այո՛, իմ սիրով, պատասխանեց Մարջանը ծանրությամբ: Մենք մեր տիրուհուց գաղտնիք չունենք, Մարջանը և Սայիդը սիրում են մեկ-մեկու:

Թե՛ խափշիկը և թե՛ մալայեցի պատանին, Զեյնաբ-խանումի սեփական ստրուկները լինելով, նա կատարյալ իրավունք ուներ նրանց ազատություն շնորհելու:

Այս օրից Սայիդն ազատ է, խոսեց տիկինը գոհունակ կերպով, բայց լսի՛ր, Մարջան, թե դու և թե քո սիրականը չպիտի հայտնեք ձեզ ազատված մինչև մի հարմար ժամանակ, մինչև դուք պսակված կլինեիք:

Հասկանում եմ. . . ասաց խափշիկն ուրախալի ձայնով և համբուրեց յուր տիկնոջ ոտքերը ի նշան յուր շնորհակալության:

Ուրեմն դու մի՛ ուշացիր, Մարջան, շուտով ազանը կկանչեն:

Դուք միայն ասացեք, թե որտեղ է նրա բնակարանը:

Դու կգտնես նրան քաղաքիս Սար-Ասքերի տանը, նրա կալվածքներն է կառավարում:

Այդքանը բավական է ինձ, ասաց Մարջանը վեր կենալով: Դուք կախարդին սպասեցեք գիշերվա տասներկու

Ջ

Քաղաքի ազնվապետական թաղերից մինի մեջ կանգնած էր փառավոր տուն, շրջապատված բարձր աշտարակներով և ատամնավոր պարիսպներով: Գլխավոր մուտքի հանդեպ շարած մի քանի հրացաններն և նրանց մոտ մի թումբի վրա նստած պահապան սարվազները՝ ցույց էին տալիս, թե այդ ապարանքը պատկանում էր մի զինվորական աստիճանավորի: Եվ արդարև, այնտեղ կենում էր զորքի Սեր-Ասքերը:

Առավոտյան ժամն էր: Հոյակապ տան դահլիճներից մինի մեջ, որի լայն, գույնզգույն ապակիներով զարդարված լուսամուտները բացվում էին դեպի գեղեցիկ պարտեզը, նստած էին երկու ամուսիններ յուրյանց հասակի զառամյալ և պատկառելի տարիքում: Կինը թեյի մեքենայի կողքին չայ էր պատրաստում, իսկ այրը նրանից հեռու յուր վաղորդյան նամազն էր կատարում: Երբ վերջացրուց նա յուր աղոթքը, մոտեցավ կնոջը և նստեց նրա մոտ: Կինը լցրեց մի բաժակ թեյ և դրեց նրա առջև: Երբ վերջացրեց նա խմելը, սենեկասպաս փոքրավորներից մինը ներս բերավ դեյլանը և դրեց յուր աղայի առջև: Նա սկսեց ծխել: Նրանք երկուսն էլ դեռ չէին փոփոխել իրանց մեջ ոչ մի խոսք: Բայց նրանց բազմահոդ դեմքերից երևում էր, թե երկուսի միտքն էլ զբաղված էր մի ծանրակշիռ ընտանեկան խնդրով:

Այրն առաջին ընդհատեց տիրող լռությունը:

Կին, դու ո՞րտեղից գիտես, թե Մահին սիրում է Քերիմբեկին:

Մեհրին ինձ պատմեց բոլորը, պատասխանեց տիկինը:

Բայց դու Մահիի լեզվից ոչինչ չե՞ս լսել:

Ես նրանից հարցրի, բայց նա ոչինչ չպատասխանեց, միայն լաց էր լինում:

Ուրեմն այդ հաստա՞տ բան է:

Նա Մեհրիից թաքուն բան չունի, նա յուր աղախնին պատմել էր բոլորը և աղախինը հայտնեց ինձ: Ալևոր զորապետի խորշոմած, բայց միևնույն ժամանակ պատկառելի դեմքն ընդունեց խիստ ծանր արտահայտություն, և նա առաջ տարավ յուր խոսքը:

Յուր սիրո մեջ չէ սխալվել Մահին: Քերիմ-բեկն արժան է նրան:

Տիկնոջ թառամած, բայց տակավին գեղեցիկ աչքերում փայլեցան ուրախության նշույլներ: Նա գոհ էր, որ ամուսնի համազգայությունը համապատասխանում էր յուրյան:

Այդ երիտասարդին, առաջ տարավ զորապետը, Գուրջիստանի Թիֆլիս քաղաքից ես բերեցի որպես գերի: Նա ազգով հայ էր, իսկ կրոնքով քրիստոնյա: Բայց շուտով ճանաչեց նա մեծ մարգարեի կրոնքի ճշմարտությունը և ընդունեց իսլամը: Այժմ նա ամենաբարեպաշտ մուսուլմաններից մինն է: Նա այսքան տարի յուր ծառայության մեջ միշտ հավատարիմ մնաց ինձ, այդ պատճառով ես սիրում եմ նրան որպես իմ աչքի լույսը: Վերջապես նա ազատեց ինձ մահից . .. և ես իմ կյանքով պարտական եմ նրան:

Նա ազատեց քեզ մահի՞ց, կրկնեց կինն ուրախանալով:

Այո՛: Հերաթի կռվումը մենք հաղթվեցանք, իմ զորքը ցրվեցավ: Ավղանների և բելուջների սուրը անխնա կոտորում էր մեր սարվազներին նրանց հալածելու միջոցին: Ես նույնպես ստիպված էի խույս տալ կռվի դաշտից: Բայց հանկարծ իմ թուրքմենցի ձին գլխիցը գնդակ ընդունելով գլորվեցավ գետին: Ես թավալվեցա փոշիների մեջ: Մին էլ այն տեսա, մի ավղան արծվի արագությամբ չոքեց իմ կուրծքի վրա: Նրա դաշնակը փայլեց: Բայց հեռվից ծխաց մի հրացան և ավղանը մի ակնթարթում գլորվեցավ իմ մոտ: Ես տեսա իմ ազատիչը՝ Քերիմ-բեկը՝ վրա հասավ, ոտքով գլորեց դիակը դեպի մի կողմ և ինձ վեր բարձրացրեց: Նա տվեց ինձ յուր նժույգը՝ ասելով «դուք փախեք, Սերթիփ, ես կարող եմ, ինձ ազատել»: Ես համբուրեցի նրա ճակատը և այն րոպեից խոստացա նրան Մահիին...

Փառք քեզ, աստված, բացականչեց կինն յուր աչքերը դեպի երկինք ուղղելով: Մի՞թե այդքան քաջ է Քերիմ-բեկը:

Նրա մեջ փղի ուժ կա և առյուծի սիրտ, պատասխանեց ծերունի զորապետը. նա յուր թրի մի հարվածքով վայր է գցում մի ահագին գոմեշի գլուխը:

Մաշալլա՛ . . . գոչեց կինը: Բայց ո՛րքան ազնիվ է նա որպես տղամարդ, չնայելով որ Մահին նրա համար հանգստություն չունի, նա մինչև այսօր ուղղակի աչքով չէ նայել մեր աղջկա երեսին:

Քերիմ-բեկը կատարյալ տղամարդ է, նա արժան է մեզ փեսա լինել և մեր բոլոր հարստության ժառանգ:

Բայց ինչո՞ւ չհայտնել նրան մեր նպատակը:

Ես այս րոպեիս գնում եմ դրսի տունը, նրան կկանչեմ ինձ մոտ և բոլորը կասեմ, խոսեց Սեր-Ասքերը և վեր կացավ, վերարկուն գցեց ուսին և դուրս գնաց:

Սույն միջոցին ներս մտավ մի մանկահասակ աղջիկ հիանալի գեղեցկությամբ: Նրա սև գանգուրները խիտ օղակներով ծփում էին կիսամերկ թիկունքի վրա: Աղեղնաձև հոնքերն պատել էին երկայն թերթերունքներով հովանավորված աչքերը, որոնց մեջ մանկական կրակը վառվում էր յուր բոլոր արևելյան ջերմությամբ:

Դա Մահին էր: Մայրը պատմեց նրան հոր խոսքերը և յուրյանց նպատակը: Օրիորդն ոչինչ չպատասխանեց: Մի քանի կաթիլ արտասուք երևացին նրա սևորակ աչերի մեջ և հանդարտ կերպով գլորվեցան մուգ-վարդագույն թշերի վրա: Այդ նրա համաձայնության արտահայտությունն էր:

Սեր-Ասքերը, դուրս գալով հարեմխանայից, առանձնացավ դրսի տան սենյակներից մինի մեջ և իսկույն հրամայեց յուր մոտ կանչել Քերիմ-բեկին:

Քանի րոպեից հետո հայտնվեցավ մի տղամարդ վայելուչ կազմվածքով և համակրական դեմքով: Նա խորին մեծարանքով գլուխ տվեց ծերունի զորապետին և կանգնեց:

Նստի՛ր, Քերիմ-բեկ, ասաց զորապետը: Մոտ նոտի՛ր:

Երիտասարդը պահպանելով յուր պատշաճավոր համեստությունը, չոքեց զորապետից փոքր-ինչ հեռու խալիների վրա:

Լսի՛ր, բարեկամ, խոսեց ծերունին, ես այսօր պետք է հայտնեմ քեզ մի միտք, որ վաղուց դրած էր իմ սրտի մեջ: Դու տեսնում ես, որ ես արդեն հասակս առած եմ, գերեզմանը շատ հեռու չէ ինձանից, մահը կանգնած է իմ վզի ետնեն: Միակ ճրագն, որ պետք է վառ պահե իմ օջախը, է իմ սիրելի աղջիկ Մահին: Բացի նրանից, դու գիտես, ես ուրիշ զավակ չունեմ: Մահին այժմ տասն և վեց տարեկան է, ուրեմն ես կարող եմ կատարել իմ խոսքը, որ տվեցի քեզ Հերաթի կովի դաշտումն, երբ դու իմ կյանքն ազատեցիր մահից: Մահին քո կինը կլինի, Քերիմ-բեկ, իսկ դու իմ որդին: Եվ իմ բոլոր հարստությունը կմնա ձեզ ժառանգություն:

Այդ երկար մոնոլոգի միջոցին Քերիմ-բեկի դեմքն ավելի և ավելի մռայլվում էր: Կարծես թե նա սարսափելով սպասում էր ծերունի զորապետի վերջին խոսքերին:

Այժմ իմ որդի, ես այսուհետև այդպես պետք է կոչեմ քեզ, ե՛կ ձեռքս համբուրիր, որ քեզ օրհնեմ:

Ներքին պատերազմն ամենասաստիկ կերպով խռովում էր երիտասարդի սիրտը: Մի քանի րոպե նա տարուբերվեցավ անվճռականության մեջ:

Աստված երկար կյանք տա ձեզ, իմ տե՛ր, պատասխանեց նա շփոթվելով . Ես պատրաստ եմ համբուրել ոչ թե ձեր ձեռքն, այլ և ձեր հողաթափները: Բայց ինչ որ վերաբերում է Մահիին, այդպես շուտ չեմ կարող ընդունել մի այդպիսի առաջարկություն:

Զարմանքը ծերուհու մեջ սարսափի փոխվեցավ, լսելով մի այդպիսի անսպասելի պատասխանը, նա հարցրուց անհամբերությամբ:

Երևի դու չե՞ս սիրում Մահիին:

Երիտասարդը դարձյալ ընկղմվեցավ դժվարացուցիչ դրության մեջ: Նա չգիտեր, թե ինչ պատասխանե: Իսկույն ծագեցավ նրա գլխում մի միտք և նա վճռեց կեղծավորվիլ:

Ես սիրում եմ Մահիին, իմ տեր, բայց նրա սերից ավելի ես պատվում եմ իմ ուխտը:

Ո՞րպիսի ուխտ, զարհուրելով հարցրուց ծերունին:

Հերաթի կռվի դաշտումն, երբ հայտնեցիք դուք ձեր խոստմունքը Մահիի մասին, միևնույն րոպեին ես երդվեցա մեծ մարգարեի առջև, որ չպսակվեմ՝ մինչև Մեքկա ուխտավորության չերթամ: Ես պետք է գնամ Մեքկա, ես պետք է մտնեմ Քաբայի տունը, համբուրեմ Մուհամմեդի գերեզմանը և հաջի դառնամ, որպեսզի կարողանամ դրանով սրբել իմ ձեռքերն այնքան արյուններից, որ թափել եմ ես...

Այս խոսքերն երիտասարդն արտասանեց այնպիսի մի ջերմեռանդությամբ, մինչ ծերունու սրտում ամենևին կասկած չմնաց նրանց ճշտության մասին: Նոր իսլամը ընդունող այլակրոն երիտասարդի այդ մուսուլմանական զգացմունքն ավելի բարձր, ավելի վսեմ էր, քան թե Մահիի սերը և ամեն երկրային բան: Այդ պատճառով ծերունին խոնարհվեցավ երիտասարդի այդ սուրբ կրոնական պարտավորության առջև:

Երբ որ այդպես է, խոսեց ծերունին, ես չեմ շտապեցնի քո հարսանիքն, իմ որդի: Ես նախ և առաջ մեծ պատրաստությամբ կուղարկեմ քեզ Մեքկա, դու քեզ հետ կունենաս մի ամբողջ քարավան ծառաների և ստրուկների և կկատարես քո ուխտը:

Աստված թող երկար կյանք պարգևե քեզ, տեր իմ, պատասխանեց երիտասարդը և մոտեցավ համբուրելու ծերունու աջը:

Բայց զորապետը բռնեց նրա ձեռքից. Խոստանու՞մ ես, որդի, որ հաջի դառնալեդ հետո կկատարես իմ կամքը:

Երիտասարդը կրկին շփոթվեցավ: Ասա՛, մի՛ ամաչի:

Խոստանում եմ... պատասխանեց Քերիմ-բեկն, իսկ այդ խոսքը կարծես այրեց նրա շրթունքը...